Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 17-ի N 907 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՄԻ ՇԱՐՔ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ԻՆԴԵՔՍՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Ինդեքսը | Միջոցառումը | Նպատակը | Իրականացնող մարմինները | | Կատարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| | | | պատասխանատու | համակատարողը | |
| «Ներվորքդ ռեդինես» (Networked readiness) | 1. Գործարարների և նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ վարկանիշային գնահատականների վերաբերյալ շնորհանդես/ներկայացումների կազմակերպում | ինդեքսի ձևավորման հիմքում ընկած բաղադրիչների վերաբերյալ իրազեկում և տեղեկացվածության բարձրացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն (համաձայնությամբ) | տարեկան հաշվետվության հրապարակումից հետո երկամսյա ժամկետում |
| | 2. “Doing Business” վարկանիշային գնահատականի բարելավման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների ընթացքի հանրային (այդ թվում` գործարար շրջանակ- | բարեփոխումների արդյունքների վերաբերյալ տեղեկացվածության բարձր աստիճան, վստահություն` դրված թիրախներին հասնելու հարցում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | հանրապետական գործադիր մարմիններ | կիսամյակային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ներում) լուսաբանում | | | | |
| | 3. ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրի ներքո դպրոցներին համակարգչային տեխնիկայով ապահովման, այդ թվում՝ ինտերնետային կապի մատչելիության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրի մշակում և իրականացում ՄԺԾԾ-ի շրջանակներում | «Կրթական համակարգի որակ» բաղադրիչի բարելավում, հատկապես՝ հանրապետության մարզերում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | ՀՀ ֆինանսների նախարարություն | 2011 թ. |
| | 4. Ինստիտուցիոնալ համագործակցության հաստատում՝ ինդեքսը մշակող համապատասխան կազմակերպությունների հետ | մեթոդաբանական խնդիրների տիրապետում, անհրաժեշտ տեղեկատվության պատշաճ փոխանակման կանոնակարգված կազմակերպում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br>ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ) | 2011 թ. սեպտեմբեր |
| | 5. Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) կողմից առաջադրված տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի ցուցանիշների վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրի վարման | միասնական տեղեկատվական բազայի միջոցով ճշգրտված տեղեկատվության տրամադրում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (համաձայնությամբ)<br>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) | 2011 թ. հոկտեմբեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | կարգի մշակում | | | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |
| «Քրափիշն փրտեփիշնա» (Corruption Perceptions) | 6. Գնումների գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ գնումների մասնագետների համար վարքագծի և շահերի բախման կարգավորման ընթացակարգերի ներդրում | գնումների գործող համակարգի բարելավում և պետական գնումների ոլորտում լիազոր մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | 2011 թ. |
| | 7. Էլեկտրոնային գնումների համակարգի ներդնում | պետական գնումների համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | 2011 թ. |
| | 8. Հանրային գնումների տարեկան հաշվետվության հրապարակում և լուսաբանում | պետական գնումների գործընթացի հանդեպ վստահության բարձրացում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | 2011 թ. |
| | 9. Պետական գնումների վերաբերյալ առավել տարածված միջազգային լեզուներով և կապուղիներով ամբողջական տեղեկատվությունն էլեկտրոնային միջոցներով տրամադրելու ընթացակարգերի կիրառում | հանրային գնումների գործընթացում մրցակցային միջավայրի ապահովում | ՀՀ ֆինանսների նախարարություն | | 2011 թ. |
| | 10. Հարկային ծառայողի վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ հսկողության խստացում | հարկային ծառայողների նկատմամբ վստահության և հարգանքի մթնոլորտի ձևավորում | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | | 2011 թ. |
| | 11. Հարկային մարմնի կողմից ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության և ստուգումների պլանավորման ինքնագնահատման | ստուգման ենթակա հարկ վճարողներն ընտրվում են ռիսկային չափանիշների հիման վրա՝ ստուգման ենթակա հարկ | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե | | 2011 թ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | համակարգի զարգացում | վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) միջոցով | | | |
| | 12. Ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության ռիսկի չափորոշիչների վերանայում և ներդրում | ռիսկերի կառավարման վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի կատարելագործում | ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե | | 2011 թ. |
| | 13. Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրի իրականացման առաջընթացի զեկույցի մշակում և հրապարակում | պետության կողմից հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման վերաբերյալ տեղեկացվածության և վստահության մակարդակի բարձրացում | ՀՀ կառավարության աշխատակազմ | հանրապետական գործադիր մարմիններ | 2012 թ. հունվար |
| | 14. Մաքսային մարմնի կողմից բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտ ճանաչելու չափորոշիչների ու ընթացակարգերի սահմանում և ներդրում | սահմանել պարզեցված ընթացակարգեր՝ բարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների համար | ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե | | 2012 թ. 1-ին կիսամյակ |
| | 15. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2012-2015 թվականների միջոցառումների ծրագրի նախագծի մշակում | պետության կողմից հակակոռուպցիոն քաղաքականության շարունակականության ապահովում | ՀՀ կառավարության աշխատակազմ | հանրապետական գործադիր մարմիններ | 2012 թ. հոկտեմբեր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| «Էկոնոմիկ ֆրիդըմ» (Economic Freedom) | 16. Սեփականության իրավունքի ինստիտուտը լուսաբանող հաղորդաշարերի և տեսահոլովակների հեռարձակում | հասարակության մեջ սեփականության իրավունքի ընկալման և իրավական տեղեկացվածության մակարդակի բարձրացում | ՀՀ կառավարության աշխատակազմ | ՀՀ արդարադատության նախարարություն | պարբերաբար |
| | 17. Մտավոր սեփականության իրավունքների գրանցման, պաշտպանության և կիրարկման օրենսդրության համապատասխանեցում ԵՄ-ի ստանդարտներին | ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | 2011-2012 թթ. |
| | 18. Պետության կողմից «մեկ պատուհանի» սկզբունքով մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնում | պետական պաշտոնյա-քաղաքացիներ անմիջական շփումների հնարավորության կրճատում | հանրապետական գործադիր մարմիններ | | 2011-2012 թթ. |
| «Գլոբալ քոմփեթիթիվնես» (Global Competitiveness) | 19. Կառավարման դպրոցների որակի բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրի մշակում | ինդեքսը ձևավորող «Բարձրագույն կրթություն և վերապատրաստում» բաղադրիչի բարելավում | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | 2011-2012 թթ. |
| | 20. Տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանն ուղղված գործողությունների պլանի մշակում | արտահանման ամբողջական արժեշղթայի նկարագրմամբ 1-2 փորձնական ծրագրերի իրականացմամբ արտահանման դիվերսիֆիկացիայի խորացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | | 2011-2012 թթ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 21. Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող տարեկան զեկույցների վերաբերյալ հանրային լուսաբանում | գործարարների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և քաղաքականության մշակողների շրջանում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների շեշտադրում | ՀՀ նախարարություններ, գերատեսչություններ | «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն (համաձայնությամբ) | տարեկան զեկույցի հրապարակումից հետո երկամսյա ժամկետում |
| | 22. Տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգի արդյունավետության բարձրացում | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կարողությունների հզորացում և իրավակիրառ մեխանիզմների կատարելագործում | ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ) | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2011-2012 թթ. |
| | 23. Հետազոտությունների և մշակումների ուղղությամբ արդյունաբերություն-համալսարաններ կապի ամրապնդում | Ազգային ինովացիոն համակարգի գիտական հենքի զարգացում, արդյունաբերության մեջ գիտական արդյունքների ներդրման ընդլայնում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միություն (համաձայնությամբ) | 2011-2012 թթ. |
| | 24. Դպրոցահասակ երեխաների հաշվառման և հանրակրթության մեջ ներգրավման մեխանիզմների կատարելագործում | տարրական կրթության մեջ համախառն և զուտ ընդգրկվածության գործակիցների բարելավում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | ՀՀ մարզպետարաններ<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն | 2012 թ. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ